Մեծ Բրիտանիա

հավասար
հնարավորությունների երկիր

Վիճակագրություն

Մեծ Բրիտանիայում բնակվող հաշմանդամների թիվը կազմում է շուրջ 11 միլիոն չափահաս և 770.000 երեխա: Ամեն հինգերորդ չափահասը և ամեն քսաներորդ երեխան ունի հաշմանդամություն, չնայած նրանցից շատերը իրենց չեն համարում հաշմանդամ և չեն օգտվում այն ծառայություններից և արտոնություններից, որոնք նախատեսված են բացառապես հաշմանդամների համար:

Սոցիալական խնամք

2003թ.-ի դրությամբ շուրջ 29.000 հաշմանդամ երեխաներ ստացել են սոցիալական ծառայություններից համապատասխան աջակցություն: Հաշմանդամ երեխաներին տրամադրվող խնամքի ծախսը կազմում է 200-ից 500 ֆունտ մեկ գիշերվա համար:

Բնակարանային ապահովում և մատչելիություն

Սկսած 1999թ.-ի հոկտեմբերից բոլոր նոր շենքերն ու շինություններն պետք է հարմարեցված և մատչելի լինեն բնակչության սակավաշարժ խմբերի համար: Նոր պահանջները կիրառելի են նաև փողոցների, ավտոկայանատեղիների, շենքերի մուտքերի հարմարեցմանը, միջանցքների պատշաճ լայնության ապահովմանը, էլեկտրական վարդակների և անջատիչների՝ հաշմանդամի համար հասանելի բարձրության վրա տեղադրմանը, ինչպես նաև առաջին հարկում սայլակավոր հաշմանդամների համար հարմարեցված սանհանգույցների առկայությանը:

Հաշմանդամություն ունեցող ցանկացած անձ իրավունք ունի դիմել համապատասխան պետական մարմին՝ իր բնակեցման վայրը հարմարեցնելու համար անհրաժեշտ ծախսերը հոգալու նպատակով: Ֆինանսական աջակցությունը տրամադրվում է դռների մուտքերի լայնացման, թեքահարթակների, վերելակների և բազրիքների կառուցման, խոհանոցների հարմարեցման, սանհանգույցում հատուկ սարքավորումների տեղադրման համար:

Դրամաշնորհի գումարի առավելագույն չափը կազմում է 20 հազար ֆունտ, սակայն համապատասխան մարմինը կարող է բացառիկ դեպքերում ավել գումար տրամադրել:

Տրանսպորտ

Տաքսիներն արդեն վաղուց լիովին հարմարեցված են հաշմանդամների համար. մեքենայի սրահում նախատեսված է հատուկ տեղ սայլակի համար, իսկ վարորդները վարժ են հաշմանդամներին օգնելու առումով: 2006թ.-ին հաշմանդամների համար անմատչելի վերջին քաղաքային ավտոբուսը դարձել է Լոնդոնի տրանսպորտի պատմության թանգարանի նմուշ, քանի որ նման փոխադրամիջոցների օգտագործումն այլևս արգելված է, և ներկայումս քաղաքային ավտոբուսների 100%-ը հարմարեցված է հաշմանդամների (այդ թվում՝ սայլակ օգտագործողների) համար:

Կրթություն

1944թ.-ին ընդունված՝ «Կրթության մասին» օրենքով ամրագրվեց, որ յուրաքանչյուր երեխա պետք է ստանա իր տարիքին, կարողություններին և ունակություններին համապատասխան կրթություն, և անհրաժեշտ է նախատեսել հատուկ կրթության հնարավորություն բոլոր նրանց համար, ովքեր ունեն դրա կարիքը:

Ներկայումս 16-17 տարեկան հաշմանդամների 62 տոկոսը ավարտում են միջնակարգ դպրոց:

Բուհերի ուսանողների շուրջ 3 տոկոսը հաշմանդամ երիտասարդներ են: Ուսման ընթացքում նրանք չեն ենթարկվում որևէ խտրականության:

Հանրակրթական դպրոցում ուսումն ավարտելուց առաջ հաշմանդամ աշակերտներին այցելում են հատուկ խորհրդատուներ, որոնք շրջանավարտներին օգնում են կողմնորոշվել ուսումը շարունակելու կամ աշխատանքի ընդունվելու հարցերում:

Զբաղվածություն

2004թ.-ին շուրջ 840.000 հաշմանդամներ աշխատում էին հանրային սեկտորում, ինչն երեք անգամ ավել է, քան 1998 թվականին:

Հետաքրքիր փաստեր

- Բուքինգեմյան պալատը բաց է այցելուների համար 1983թ.-ից: Սայլակավոր հաշմանդամներն օգտվում են հատուկ մուտքից, որը սովորաբար ծառայում էր բացառապես թագավորական ընտանիքի անդամներին:
- Մեծ քաղաքներում կան նորաձևության կենտրոններ, որոնք կարում են ժամանակակից հագուստ հաշմանդամների համար: Պարբերաբար հրատարակվում է հագուստի հատուկ կատալոգ սայլակ օգտագործող մարդկանց համար: Անցկացվում են հաշմանդամների համար նորաձևության մրցույթներ:
- 2000թ.-ին լույս է տեսել «Անգլիայի մատչելի սանհանգույցների քարտեզ-ուղեցույցը»:

- Երկու հաշմանդամ սայլակներով անցել են շուրջ 2.000 կմ Մեծ Բրիտանիայով: Արդյունքում նրանց հաջողվեց հայթհայթել 500.000 ֆունտ գումարի հանգանակություն՝ ողնուղեղի վնասվածքների ոլորտում գիտական հետազոտություններ անցկացնելու համար:
- 400 կուրորտներ առաջարկում են հաշմանդամների համար հատուկ ծառայություններ:
- Դեյվիդ Բլանքեթը, որն ի ծնե չի տեսնում, մեծացել է աղքատ ընտանիքում: Հետագայում նա զբաղեցրել է բարձր պետական պաշտոններ (Խորհրդարանի պատգամավոր, Կրթության նախարար, Ներքին գործերի նախարար և այլն):

Բրիտանական Խորհուրդ
կազմակերպության երևանյան
գրասենյակը լիովին հարմարեցված է
հաշմանդամների համար:

Սույն նախագիծն իրականացվում է
ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի
Դեսպանատան աջակցությամբ

Կոնտակտ տեղեկություններ

«Ունիսոն» հասարակական
կազմակերպություն
Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռ./ֆաքս՝ 522170
էլ. փոստ՝ unison@netsys.am
Վեբ-կայք՝ www.unison.am